ԴԻՄԱԴՐԵԼ ՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱՆԳՆԵԼ

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. Բ ԹԱԳ. 11.1

1 Հետևյալ տարի՝ թագավորների պատերազմի դուրս գալու ժամանակ, Դավիթը Հովաբին և նրա հետ իր ծառաներին ու բոլոր իսրայելացիներին ուղարկեց, որոնք կոտորեցին ամմոնացիներին և պաշարեցին Ռաբբան. բայց Դավիթը մնացել էր Երուսաղեմում:

- ***Դավիթը՝ Աստծու սրտին հաճելի մարդը, փորձառու ռազմիկ էր, բայց նա պարտվեց ոչ թե ամմոնացիներին, այլ սեփական մարմնին ու սատանայի <u>խաբեությանը</u>:***

I. ՎՏԱՆԳԸ՝ ԴԻՐՔԻՑ ՀԵՌԱՆԱԼՈՒ ՄԵՋ Է:

...բայց Դավիթը մնացել էր Երուսաղեմում:

- ***Պատերազմի ժամանակն էր: Թագավորների տեղը պատերազմի դաշտն էր: Դավիթը լքեց իր պատասխանատվությունը:***

- ***Հավատացյալը կանչված է մշտական պատրաստության: Թշնամին սպասում է մեր զգոնության անկմանը:***

  *Եփեսացիս 6.11 – Եվ Աստծու սպառազինությամբ զգեստավորվեք, որպեսզի կարողանաք սատանայի **<u>հնարներին</u>** դիմադրել ...ու ամեն բան հաղթահարելով՝ հաստատուն կանգնել:*

  13 Դրա համար Աստծու սպառազինությունը վերցրեք, որ չար օրը կարողանաք դիմադրել ու ամեն բան հաղթահարելով՝ հաստատուն կանգնել:

  2 Մի օր՝ երեկոյան դեմ, Դավիթը, ելնելով իր անկողնուց, ման էր գալիս պալատի տանիքի վրա և տանիքից տեսավ, որ մի կին լվացվում էր, և այդ կինը տեսքով շատ <u>գեղեցիկ էր</u>:

  Ծնն. 3.6 - Եւ կինը տեսաւ, որ ծառը լաւ էր ուտելու համար, եւ թէ հաճելի էր աչքերին, եւ փափաքելի է ծառը նայելու համար, առաւ նորա պտղիցը եւ կերաւ, եւ իր հետ իր մարդին էլ տուաւ, եւ նա կերաւ:

II. ԶԳՈՒՇ ԵՂԵՔ ՍԱՏԱՆԱՅԻ ՀՆԱՐՆԵՐԻՑ:

- *Դավիթը անգործ էր, անպատրաստ, զինաթափված:*
- *Փորձությունը հարձակվում է անզգույշ սրտի վրա:*

  Հակոբոս 1.14-15 – Յուրաքանչյուրը փորձվում է՝ իր իսկ <u>ցանկությունից</u> <u>հրապուրվելով</u> ու խաբվելով: Այնուհետև ցանկությունը հղանալով <u>մեղք</u> է ծնում, իսկ <u>մեղքը</u> հասունանալով ծնում է մահ:

  - *Ցանկություն → Գայթակղություն → Մեղք → Մահ*

  5 Կինը հղիացավ և մարդ ուղարկեց ու Դավթին հաղորդեց՝ ասելով. Ես հղի եմ:

ՄԵՂՔԻ ՀԵՏԵՒԱՆՔԸ.

6 Դավիթը մարդ ուղարկեց Հովաբի մոտ՝ ասելով. Քետացի Ուրիային ուղարկի՛ր ինձ մոտ:

13 Դավիթը կանչեց նրան, և Ուրիան կերավ ու խմեց նրա առաջ. Դավիթը հարբեցրեց նրան,

14 Առավոտյան Դավիթը մի նամակ գրեց Հովաբին և Ուրիայի ձեռքով ուղարկեց: 15 Նամակի մեջ գրեց. Ուրիային դրե՛ք սաստիկ պատերազմի առջևի կողմը, և դուք ետ քաշվեք նրանից, որ նրան զարկեն, և սպանվի:

26 Եվ Ուրիայի կինը լսեց, որ իր մարդը՝ Ուրիան, մեռել է, և սուգ արեց իր մարդու համար: 27 Եվ երբ սուգն անցավ, Դավիթը մարդ ուղարկեց, նրան իր տուն բերել տվեց, և նա դարձավ նրա կինը ու նրա համար որդի ծնեց: Բայց այս բանը, որ արեց Դավիթը, Տիրոջ աչքին չար երևաց:

Բ Կոր. 10.4-5 – 4 քանզի մեր մարտի զենքերը մարմնավոր չեն, այլ զորավոր են Աստծով՝ բերդեր քանդելու. մենք դրանցով քանդում ենք ծածուկ մտքերը 5 և ամեն բարձունք, որ Աստծու գիտության դեմ է գոռոզանում, ու գերում ենք ամեն միտք՝ Քրիստոսին հնազանդեցնելու համար:

- ***Հոգևոր ամրոցներ.*** *Անխոստովան մեղքը դառնում է թշնամու հենակետ:*

  Եփեսացիս 4.27 – «Եվ տեղ մի տվեք սատանային»:

  Հոգևոր պատերազմը հասկանալը նշանակում է տեսնել մեղքի զարգացումը:

  Խոստովանությունը և զղջումը կոտրում են թշնամու հենակետերը:

III. ԱՍՏԾՈ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԿՈՏՐՎԱԾ, ԱՊԱՇԽԱՐՈՂ, ԲԱՅՑ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ ԴԱՎԻԹՆ ԷՐ (Բ ԹԱԳԱՎՈՐԱՑ 12):

- ***Աստված ուղարկեց Նաթան մարգարեին՝ Դավիթի մեղքը բացահայտելու համար՝ ոչ թե նրան կործանելու, այլ փրկելու:***

  «Դու՛ ես այդ մարդը» – Աստծու խոսքի սուրը հարվածեց Դավթի սրտին:

  Դավիթն արձագանքեց. «Մեղանչեցի Տիրոջ դեմ»:

- ***Հոգևոր պատերազմի զենքերը և սպառազինությունը.***

  Ճշմարտություն (Եփեսացիս 6.14)

  Հոգու սուր. Աստծու Խոսքը (Եփեսացիս 6.17)

  Աղոթք (Եփեսացիս 6.18)

- ***Սաղմոս 51*** *– Դավթի պատերազմի աղոթքը զղջումով.*

  Մաքուր սի՛րտ ստեղծիր իմ մեջ, ո՜վ Աստված, և ուղիղ հոգի՛ նորոգիր իմ ներսում (Սաղ. 51:10):

ՀՈԳԵՎՈՐ ԶԻՆՎՈՐԻ ԿՅԱՆՔԸ:

(1) ՄՆԱ ՔՈ ԴԻՐՔԻ ՄԵՋ

Մի թող քո կոչումը, աղոթքը, ծառայությունը:

«Արթուն մնացեք և աղոթեցեք, որ փորձության մեջ չընկնեք» (Մատթեոս 26.41)

(2) ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԱՊՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Լցրու ժամանակդ Աստծո Խոսքով, Աղոթքով և ծառայությամբ:

«Միշտ հաստատակամ եղեք, անվախճան, միշտ ավելացեք Տիրոջ գործում» (Ա Կոր. 15.58)

(3) ԱՐԱԳ ԶՂՋՈՒՄ ԱՆԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Մի թող մեղքը դառնա ամրոց:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ